ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » հունիսի 2013թ. N -Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Վ. ՆԻԿՈՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Վահե Նիկոյանին նշանակել Երևանի քաղաքապետի տեղակալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«Վ. ՆԻԿՈՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքապետի տեղակալներին քաղաքապետի ներկայացմամբ նշանակում է ավագանին:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանուն առաջարկվում է Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակել Վահե Նիկոյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Վ. ՆԻԿՈՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Վ. Նիկոյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Վ. ՆԻԿՈՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Վ. Նիկոյանին Երևանի քաղաքապետի տեղակալ նշանակելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՄԼԵՏԻ ՆԻԿՈՅԱՆ

Վահե Համլետի Նիկոյանը ծնվել է 1978թ. նոյեմբերի 28-ին Երևան քաղաքում, ծառայողի ընտանիքում:

1995թ. ավարտել է Երևանի թիվ 172 միջնակարգ դպրոցը: 1995-99թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում, իսկ 1999-2001թթ.՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրայում: 2001-2004թթ. սովորել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի ասպիրանտուրայում, իսկ 2004թ. պաշտպանել է գիտական թեզ՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան:

1999-2001թթ. աշխատել է ՀՀ սեփականաշնորհման նախարարությունում՝ որպես լուծարման և մեթոդաբանության վարչության՝ նախ առաջին կարգի, ապա՝ առաջատար մասնագետ:

2001-2002թթ. աշխատել է ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության Երևանի թիվ 3 բեռնատար ավտոտրանսպորտային ՊՓԲԸ-ում՝ որպես տնօրեն:

2002-2004թթ. աշխատել է ՀՀ պետական գույքի կառավարման նախարարության, այնուհետ՝ ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության անշարժ գույքի վարձակալության բաժնում՝ որպես բաժնի պետ:

2004-2009թթ. աշխատել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում՝ որպես ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ, իսկ 2009-2012թթ.՝ որպես ֆինանսական վարչության պետ:

2011-2012թթ. դասավանդել է Երևանի պետական տնտեսագիտական համալսարանում:

2012թ. հունվարից աշխատել է որպես Երևանի քաղաքապետի տեղակալ:

Հայաստանի Հանրապետական կուսակցության անդամ է:

Ամուսնացած է, ունի երկու որդի: